



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՃԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Լճափ համայնք, Ազատամարտիկների 27

ՈՐՈՇՈՒՄ N 19

« 20.12.2014թ »

Տեղական տուրքերի կվճարների դրույքաչափերի հաստատման հարցի մասին

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին » ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներով Համայնքի ավագանին որոշում է .

1.ա) համայնքի տարածքում նոր կառուցվող շինությունների (ներառյալ ժամանակավոր) շինարարության սկսման թույլտվության համար սահմանել տեղական տուրք 5000 /հինգ հազար /դրամ յուրաքանչյուր շինության համար:

1.բ/ համայնքի տարածքում հին շինությունների քանդման թույլտվության համար սահմանել տեղական տուրք 5000 /հինգ հազար/ դրամ յուրաքանչյուր շինության համար:

2. ա / համայնքի տարածքում ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար սահմանել տեղական տուրք յուրաքանչյուր խանութի համար տարեկան 4000 /չորս հազար / դրամ, ընդամենը տարեկան 20000 /քսան հազար/ դրամ:

2.բ/ համայնքի տարածքում ծխախոտային արտադրանքի վաճառքի թույլտվության համար սահմանել տեղական տուրք յուրաքանչյուր խանութի համար տարեկան 6000 /վեց հազար/դրամ ընդամենը տարեկան 30000 /երեսուն հազար /դրամ:
Երկուսը միասին համայնքում կազմում է տարեկան 50000 /հիսուն հազար/ դրամ:

3. որոշումը ուժի մեջ է մտնում 01.01.2015թ-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՍԻՄՈՆՅԱՆ